

29.06.2015

Ք. Իջևան

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. 2014-15թթ. ուսումնական տարվա ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:
2. Դասախոսների 2015-2016թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների նախնական իրազեկում /Զեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:
3. Այլ հարցեր /Զեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:

ԼՍԵՑԻՆ.- Օրակարգի առաջին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց, որ ամառային քննաշրջանը նախապատրաստվել և կազմակերպվել է ֆակուլտետի տարեկան աշխատանքային ժամանակացույցին համապատասխան: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասն բացատրվել է քննությունների և ստուգարքների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Քննաշրջանն անցել է հանգիստ, առանց ավելորդ լարվածության: Դասախոսների և ուսանողների միջև լուրջ տարաձայնություններ չեն ծագել գնահատման հարցում: Երկուստեք գործել են իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակներում: Իսկ եթե եղել են բողոքարկման կամ անհամաձայնության մասնակի դեպքեր, ապա դրանք արագորեն լուծում են ստացել դեկանատի կողմից: Կիսամյակի ընթացքում ակտիվությամբ աչքի ընկած ուսանողները ստացել են բարձր միավորներ:

Բացարձակ առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 82,44%: 2014-2015թթ. ուսումնական տարվա զարնանային քննաշրջանին մասնակցել է 262

ուսանող: Միայն գերազանց գնահատականներ ստացել է 18 ուսանող: Նրանք փայլել են իրենց ակադեմիական իմացությամբ և բավարարել են քննող դասախոսների ամենախիստ պահանջները:

Ֆակուլտետի 46 ուսանող քննաշրջանը փակել է ակադեմիական պարտքերով: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ընդհանուր գծերով ակադեմիական պարտքերի պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Պատմություն -- պարտք ունի 8 ուսանող,

Մանկավարժություն և հոգեբանություն -- պարտք ունի 7 ուսանող,

Ֆրանսերեն լեզու -- պարտք ունի 7 ուսանող,

Անգլերեն լեզու -- պարտք ունի 17 ուսանող,

Հայոց լեզու և գրականություն -- պարտք ունի 7 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Բ.գ.թ., դոց. Վ. Ավագյանը, մ.գ.թ. դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ.,դոց. Ա. Սարհատյանը: Ելույթ ունեցողները փաստեցին, որ առկա ուսուցման համակարգում ակնառու կերպով աճել է քննաշրջանին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Շեշտադրվեց լեզուներ ուսումնասիրող ուսանողների պատրաստվածության բարձր աստիճանը: Որակը բարձրացնելու համար կարևոր է կանոնակարգել ինքնուրույն աշխատանքի ժամերը, դրանք դարձնել արդյունավետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 2014-15թթ. ուսումնական տարվա ամառային քննաշրջանի կազմակերպական աշխատանքները և արդյունքները համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.- Օրակարգի երկրորդ կետի կապակցությամբ զեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի չորս ամբիոններում ժամանակին ավարտվել են դասախոսների 2015-2016թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը: Մինչ առարկաների բաշխումը բոլոր ամբիոններում տեղի են ունեցել

քննարկումներ: Անհատական բեռնվածության հիմքում դրվել է արհեստավարժությունը, գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Դասախոսների զգալի մասը կշարունակեն դասավանդել նախորդ տարիներին դասավանդած մոդուլները: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ամբիոնների վարիչներ Բ.Գ.Թ., դոց. Վ. Ավագյանը, մ.գ.թ. դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ք. Հարությունյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ.Գ.Թ., դոց. Ա. Սարհատյանը:

Ելույթ ունեցողները հայտնեցին, որ անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն քննարկումներից հետո: Յուրաքանչյուր դասախոս պետք է թե փաստաթղթային և թե բովանդակային կողմերով լիովին պատրաստ լինի նոր ուսումնական տարվան: Մեծ ուշադրություն պետք է դարձնել դասավանդման որակի բարձրացմանը և ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքներին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան